ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«03» մարտի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Գրական աշխարհի հարգելի ներկայացուցիչներ, ստեղծագործողներ, ընթերցողներ

Շնորհավորում եմ Գրողների միջազգային օրվա առթիվ:

Այսօրը լավ հնարավորություն է երախտագիտություն հայտնել այն մարդկանց, ովքեր իրենց խոսքի, գրի միջոցով լույս են սփռում հասարակության մեջ, ովքեր իրենց գրական գործունեությամբ հետևողականորեն նպաստում են մտավոր և մշակութային կյանքի զարգացմանը, ովքեր ոչ միայն կերտում են գրական ժառանգություն, այլև օգնում են խորությամբ հասկանալու մեր պատմության անցյալն ու ներկան, մեր արժեքները:

Ձեր դերակատարումը մեծ է հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացող այս ժամանակաշրջանում, որտեղ պետք է մատուցվող որակյալ ստեղծագործություններով ոգեշնչել, երիտասարդության մեջ սեր արթնացնել դեպի գրականությունն ու ընթերցանությունը, ինչպես նաև բացահայտել նոր գաղափարներ և իրականություններ:

Կրկին շնորհավորելով Գրողների միջազգային օրվա առթիվ՝ բոլոր ստեղծագործողներին մաղթում եմ նորանոր ստեղծագործական հաջողություններ, բեղմնավոր աշխատանք ու անսահման ոգեշնչում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**